

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

2020-2022

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
ԾՐԱԳԻՐ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2017-2018 թվականներին կազմել են համապատասխանաբար՝ 14,276,809.4, 14,275,970.0 հազ. դրամ, իսկ 2019 թվականին՝ 16,818,407.8 հազ. դրամ (ներառյալ 20% ԱԱՀ), որից 13,734,974.0 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացման, իսկ 2,920,153.7 հազ. դրամը՝ «1119» ծրագրին՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ իրականացման, 69,887.8 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրման, 63,392.3 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացման և 30,000.0 հազ. դրամը՝ «1156 Սփյուռքի և համահայկական հիմնախնդիրների թեմատիկ հետազոտություններ» ծրագրի 11002 միջոցառմանը՝ Սփյուռքի համայնքների պատմության, նրանց խնդիրներին, համահայկական նշանակության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներին, ԲՈւՀ-ական և գիտահետազոտական (ԵՊՀ, ԵՊԼՀ, ՀՃՈՒՀ) համապատասխան ամբիոններին, կենտրոններին թեմատիկ ֆինանսավորման նպատակով:

Գիտության ոլորտի 2017-2019 թվականների պետական ֆինանսավորման ծավալների բաշխումն ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման ձևերի՝ բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ֆինանսավորման 2017-2019 թվականների ծավալների բաշխումն ըստ ֆինանսավորման ձևերի:

Հ/հ	Ֆինանսավորման ձև	2017թ.	2018թ.	2019թ.
1.	Բազային ֆինանսավորում, այդ թվում՝ գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ (հազ. դրամ)	10,905,730.3	10,400,814.7	12,158,938.3
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	76.39	72.86	72.30
2.	Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում (հազ. դրամ)	1,848,056.1	2,568,461.4	3,064,153.7
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	12.94	17.99	18.22
3.	Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում (հազ. դրամ)	1,523,023.0	1,306,693.9	1,595,315.8
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	10.67	9.15	9.49
Ընդամենը (հազ. դրամ)		14,276,809.4	14,275,970.0	16,818,407.8

Պետական բյուջեի 2017-2019 թվականների ֆինանսավորմամբ իրականացվել են բազային՝ 189, 179 և 164, նպատակային-ծրագրային հետազոտությունների՝ 15, 12 և 10 ծրագրեր, պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների՝ 409 (որից 122-ը՝ անհատական խրախուսման), 436 (որից 124-ը՝ անհատական խրախուսման) և 400 (որից 122-ը՝ անհատական խրախուսման) գիտական թեմաներ:

Գիտության ոլորտի 2017-2019 թվականների պետական հատկացումների գերակշիռ մասը՝ 76.39, 72.86 և 72.30 % ուղղվել են բազային ծրագրերի ֆինանսավորմանը (ներառյալ պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները), իսկ նպատակային-ծրագրային հետազոտությունների և պայմանագրային (թեմատիկ) թեմաների ֆինանսավորմանը՝ համապատասխանաբար՝ 12.94, 17.99 և 18.22% ու 10.67%, 9.15 և 9.49%:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման և նպատակային-ծրագրային հետազոտությունների 2017-2019 թվականների ծրագրերը (բացի Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներից) իրականացվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 34, ՀՀ կրթության և գիտության նախարարության 21, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 4 (2017-2018 թվականներ) և 3 (2019 թվական), ՀՀ մշակույթի նախարարության 4, ՀՀ Նախագահի աշխատակազմ 1 (2017 թվական), ՀՀ կառավարության աշխատակազմի 1 (2017թվական) և 2 (2018 թվական), ՀՀ առողջապահության նախարարության 8 (2017թվական) և 7 (2018 թվական), ՀՀ վարչապետի աշխատակազմ 1 (2019 թվական), ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 1, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 1, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 1, Երևանի քաղաքապետարանի 1 (2017 թվականի) և 2 (2018-2019

թվականների) գիտական կազմակերպություններում: Այդ ծրագրերի 2017-2019 թվականների բյուջետային ծախսերն ըստ գերատեսչությունների բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման և նպատակային-ծրագրային հետազոտությունների 2017-2019 թվականների բյուջետային ծախսերն ըստ գերատեսչությունների:

Հ/հ	Գերատեսչություն/ՀՀ ԳԱԱ/Երևանի քաղաքապետարան	Ֆինանսավորման ծավալները, հազ. դրամ		2018թ. փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, +/-		Ֆինանսավորման ծավալները, հազ. դրամ	2019թ. փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, +/-	
		2017թ.	2018թ.	հազ. դրամ	%		2019թ.	հազ. դրամ
1.	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	5,473,184.2	4,930,660.6	-542,523.6	-9.91	5,739,975.6	809,315.0	16.41
2.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	3,993,017.0	3,879,951.1	-113,065.0	-2.83	4,764,671.9	884,720.8	22.80
3.	ՀՀ պաշտպանության նախարարություն*	1,641,470.1	2,433,461.4	791,991.3	48.25	X	X	X
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	129,416.7	116,475.1	-12,941.6	-10.00	131,880.1	15,405.0	13.23
5.	ՀՀ մշակույթի նախարարություն	170,411.9	124,570.7	-45,841.2	-26.90	149,484.8	24,914.1	20.00
7.	ՀՀ առողջապահության նախարարություն	101,821.8	91,639.6	-10,182.2	-10.00	109,967.5	18,327.9	20.00
8.	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	50,000.0	45,000.0	-5,000.0	-10.00	54,000.0	9,000.0	20.00
9.	Երևանի քաղաքապետարան	19,736.6	19,631.0	-105.3	-0.53	23,557.6	3,926.3	20.00
10.	ՀՀ Նախագահի աշխատակազմ**	39390.0	X	X	X	X	X	X
11.	ՀՀ կառավարության աշխատակազմ***	106,620.3	126,654.6	20,034.3	18.79	44,157.7	-82,469.9	-65.14
12.	ՀՀ սփյուռքի նախարարություն	14,400.0	13,392.0	-1,008.0	-7.00	X	-13,392.0	-100.00
13.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	12,558.4	11,302.6	-1,255.8	-10.00	13,563.1	2,260.5	20.00
14.	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	9,800.0	8,000.0	-1,800.0	-18.37	9,600.0	1,600.0	20.00
Ընդամենը		11,761,827.0	11,800,739.0	38,912.0	0.33	11,040,868.3	-759,870.0	-6.44

*) 2019 թվականին նպատակային-ծրագրային հետազոտությունների «Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ» միջոցառմանն ուղղված ֆինանսական միջոցները հանվել են «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումներից և նոր ծրագրով տեղափոխվել՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ինչով և պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության 2019 թվականի նպատակային-ծրագրային ֆինանսավորման դադարումը:

**) 2018 թվականին ՀՀ Նախագահի աշխատակազմի ենթակայության տակ գործող «Պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ն անցել է ՀՀ կառավարության աշխատակազմի ենթակայությանը և ֆինանսավորումը հատկացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ, ինչով և պայմանավորված են 2018թվականից ՀՀ Նախագահի

աշխատակազմի գիտական կազմակերպության բազային ֆինանսավորման դադարումը, իսկ ՀՀ կառավարության աշխատակազմի պարագայում՝ ֆինանսական ծավալների ավելացումը:
***) ՀՀ կառավարության աշխատակազմի 2019 թվականին նախատեսված գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման ծավալների նվազումը պայմանավորված է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ֆինանսավորման դադարեցմամբ:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022 թվականների հիմնական նպատակներն ու վերջնական արդյունքի չափորոշիչները¹.

Նպատակներ են՝

1. Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում,
2. Միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների իրականացում.
3. Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում.
4. Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծում՝ բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում,
5. Կրթություն-գիտություն կապի ամրապնդում՝ ձևավորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցեր՝ ապահովելով ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների ազատ տեղաշարժի իրավունքը ցանցի կազմակերպությունների մեջ.
6. Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացում:

Վերոնշյալ նպատակների վերջնական արդյունքի չափորոշիչներն են՝

1. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների առկայություն,

¹ Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունը կից ներկայացվում է պահանջվող ձևաչափով (Մեթոդաբանության ՄԱՍ 3-ի հավելված 3):

պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանեցում իրականացվող աշխատանքների արդյունավետությանը,

2. Հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրության մրցակցային մեխանիզմների, տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացման մեխանիզմների առկայություն:

3. Գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակների ներդրում, օտարերկրյա պետություններում աշխատող բարձր վարկանիշ ունեցող հայազգի գիտնականների ՀՀ-ում հետազոտական միավորի ղեկավարման և միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքային պայմանների ձևավորման մեխանիզմների առկայություն, գիտական աշխատողների 35-50 տարիքային միջակայքի մասնաբաժնի ավելացում ընդհանուրի մեջ:

4. Բնագիտության և ճարտարագիտության բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնող գիտական և գիտատեխնոլոգիական կենտրոնների, գիտական կազմակերպություններում և բուհերում գիտանորարարական միավորների առկայություն, Եվրոպական հետազոտական տարածքում մրցունակ հետազոտական ուղղությունների առանձնացման մեխանիզմների առկայություն:

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների երկու կլաստերների ստեղծում՝ ֆիզիկատեխնոլոգիական և կենսատեխնոլոգիական բնագավառներում՝ ներգրավելով այդ բնագավառների բուհեր և գիտական կազմակերպություններ:

6. Միջազգային մակարդակին համապատասխան հայազգիական հետազոտություն իրականացնող գիտական միավորների առկայություն, հայազգիական հետազոտությունների միջազգային տեսանելիության մակարդակի բարձրացում:

3. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն գտնում է, որ 2020-2022 թվականների համար առաջնահերթ են.

	Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)			Հիմնավորումներ
	2020թ.	2021թ.	2022թ.	
1.	<p>Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանում</p>			<p>Անհրաժեշտ է գնահատել գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետությունը և ներդնել կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմներ: Այս գործընթացին պետք է հաջորդի գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացումը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ գերատեսչական պատկանելությունից, միավորելով միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները: Պետք է հստակեցնել գիտական կազմակերպությունների տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները (արժևորելով տնօրենի պաշտոնը և վարչական ազդեցությունից հանելով գիտական որոշումների ընդունման գործառույթները), սահմանափակել գիտական ստորաբաժանումների ղեկավարների և տնօրենի պաշտոններն անընդմեջ զբաղեցնելու ժամանակահատվածը, հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպատիրական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և խրախուսելով բուհերի մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը (համաֆինանսավորման սկզբունքով ծրագրերի իրականացում, համատեղ լաբորատորիաների ստեղծում և այլն):</p> <p>Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության իրական մրցութային պայմանների ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես ծրագրային սկզբունքով և հասցեագրված:</p> <p>Գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը պետք է պարունակեն գիտահետազոտական բաղադրիչ, ինչը հնարավորություն է տալիս տվյալ գիտական կազմակերպության ենթակառուցվածքի արդիականացումն ու հետագա զարգացումը պայմանավորել բացառապես իրականացվող հետազոտությունների անհրաժեշտությամբ:</p> <p>Անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման և երկակի նշանակության գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խրախուսման մեխանիզմներ՝ այդ ուղղություններում իրականացվող հետազոտությունների քանակի ավելացման և որակի բարձրացման նպատակով:</p> <p>Պետք է շարունակել՝</p> <ul style="list-style-type: none"> - կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցութային ծրագրերը՝ արտաբյուջետային միջոցների ներգրավումով, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս մրցութի շահառուների շարքում ընդգրկել նաև ոչ պետական գիտական կազմակերպությունները, դրանց գիտահետազոտական լաբորատորիաներն ու խմբերը (առաջին մրցութի ժամանակ

		<p>արտաբյուջետային միջոցների մասնաբաժինը կազմել է առնվազն 25%, իսկ հաջորդ հերթական մրցույթներում՝ 35%),</p> <p>- հատուկ նշանակության հետազոտություններին ուղղված մրցույթային ծրագրերը: Գիտահետազոտական լաբորատորիաներին տարեկան տրամադրելով պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների ֆինանսավորման տարեկան առավելագույն ծավալների կրկնապատիկ աջակցություն:</p>
2.	<p>Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում</p>	<p>ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը: Անհրաժեշտ է մշակել և ներդնել գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման և օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրեր:</p> <p>Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել իրականացնել, մասնավորապես.</p> <p>- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա և ասպիրատների աջակցության անհատական խրախուսման միամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում,</p> <p>- պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ մրցույթային կարգով ընտրված մինչև 100 գիտաշխատողի տրամադրելով ամսական 166.68 հազ. դրամ հավելավճար:</p> <p>- պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ մրցույթային կարգով ընտրված մինչև 20 երիտասարդ գիտաշխատողի տրամադրելով ամսական 90.0 հազ. դրամ հավելավճար:</p> <p>Գիտության ենթակառուցվածքների արդիականացման նպատակով անհրաժեշտ է շարունակել՝</p> <p>- գիտական սարքերի և սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման ամենամյա դրամաշնորհային ծրագրերը:</p>
3.	<p>Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծում՝ բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում, կրթություն-գիտություն կապի ամրապնդում</p>	<p>Անհրաժեշտ է մշակել և ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման, գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր:</p> <p>Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերման ուղղությամբ անհրաժեշտ է պետական աջակցություն տրամադրել գիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը, ինչպես նաև հանրապետության համար հեռանկարային համարվող ուղղություններն օտարերկրյա պետությունների, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքի նմանօրինակ ուղղությունների հետ ինտեգրմանը: Մասնավորապես, միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝</p> <p>- համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,</p> <p>- անդամակցությունը գիտական կառույցներին/համագործակցություններին՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ – H.E.S.S.):</p> <p>Ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 79 ծրագիր, հայ-գերմանական 1</p>

		<p>լաբորատորիա, գործում են ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը, Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնը՝ Երևանի պետական համալսարանի և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի հենքի վրա:</p> <p>2021 թվականին պետք է շարունակել ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրին հաջորդող «Հորիզոն Եվրոպա» շրջանակային (9-րդ) ծրագրի մասնակցության ֆինանսավորումը, ինչը հնարավորություն կտա ՀՀ հետազոտական կազմակերպություններին՝ անկախ կազմակերպարավական ձևից ու սեփականության եղանակից, մասնակցելու ժամանակակից գիտական և տեխնոլոգիական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև կնպաստի ՀՀ գիտատեխնոլոգիական ոլորտի ֆինանսավորման ավելացմանը:</p>
4.	<p>Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացում</p>	<p>Հայագիտության ոլորտի առաջնային զարգացման ուղղությամբ անհրաժեշտ է՝</p> <ul style="list-style-type: none"> - ապահովել հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման, պատմության, մշակույթի, հնագիտական հարուստ ժառանգության, ինչպես նաև ժամանակակից մարտահրավերներին լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացումը, - ներդնել կադրերի պատրասման ու վերապատրաստման արդյունավետ համակարգ՝ գործընթացներում ներգարվվելով նաև օտարերկրյա պետությունների, առաջին հերթին Սփյուռքի հայագետներ, - հայագիտության բնագավառում միջազգային ծրագրերի իրականացում, այդ թվում՝ հանրապետությունում իրականացվող հետազոտությունների միջազգային տեսանելիության բարձրացում, աշխարհի հայագիտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի մշակում և իրականացում:

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսեր

Դասիչ		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1162	11001	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	Գիտության բնագավառի պետական քաղաքականության իրականացում, մոնիտորինգի և գիտության ծառայությունների ու ծրագրերի համակարգման ծառայություններ	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11002	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11004	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	Հին ձեռագրերի ինստիտուտի, ցեղասպանության թանգարանի, Բյուրարկանի աստղադիտարանի, Հայկենսատիմոլոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանում	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11005	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	Գիտական կազմակերպությունների և բուհերի մրցութային կարգով ընտրված հետազոտական խմբեր	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքի համաձայն ընտրված կազմակերպություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11007	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային

				ակադեմիայի մասին» ՀՀ օրենք
11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	Ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացում	ՀՀ ԿԳՆ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-Ը «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի վերակազմավերելու մասին» N 1301-Ն որոշում
11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	Արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացում	««ՔԵՆՂԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող թեմաներ	ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի «ՔԵՆՂ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 675-Ն որոշում
11010	Անտենային էտալոնների պահպանում և զարգացում	ՀՀ ազգային անտենային էտալոնների պահպանում և զարգացում	«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենք հոդված 26
11012	Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)	Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք
11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ (տնտեսության ոլորտ)	Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում	Չնայած «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» ծրագրով գործադիր մարմինը կարող է վերը նշված պարտադիր պարտավորությունների իրականացման հարցում ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով իրեն վերապահել ծառայությունների մատուցման կարգի սահմանում, շահառուների կոնկրետ կատեգորիաների հստակեցում, տարեկան ֆինանսավորման չափերի որոշում և այլն, այնուամենայնիվ, դրանք չեն	«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք

				կարող վերաբերվել այդ պարտավորությունների դադարեցման շուրջ որոշումներին	
	12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	Պետական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրում	Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	12002	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամներ	«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք
	31001	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի և տրանսպորտային միջոցների ձեռքբերում	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1162	32001	Ներդրումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներում	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների և մշակումների ծառայություններ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները վերազինել սարքավորումներով	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2017-2018 թվականներին կազմել են համապատասխանաբար՝ 14,276,809.4, 14,275,970.0 հազ. դրամ, իսկ 2019 թվականին՝ 16,818,407.8 հազ. դրամ (ներառյալ 20% ԱԱՀ), որից 13,734,974.0 հազ. դրամն ուղղված է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացման, իսկ 2,920,153.7 հազ. դրամը՝ «1119» ծրագրին՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ իրականացման, 69,887.8 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրման, 63,392.3 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացման և 30,000.0 հազ. դրամը՝ «1156 Սփյուռքի և համահայկական հիմնախնդիրների թեմատիկ հետազոտություններ» ծրագրի 11002 միջոցառմանը՝ Սփյուռքի համայնքների պատմության, նրանց խնդիրներին, համահայկական նշանակության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներին, ԲՈւՀ-ական և գիտահետազոտական (ԵՊՀ, ԵՊԼՀ, ՀՃՈՒՀ) համապատասխան ամբիոններին, կենտրոններին թեմատիկ ֆինանսավորման նպատակով:

ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարությունը և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագիրը ենթադրում են պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով,

այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով: Գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը զգալիորեն կմեծացնի նաև գիտական արդյունքի առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի դրանց ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2020-2022 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումները: Գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորումն իրականացվելու է բացառապես ծրագրային սկզբունքով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը հատկացվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովման, ինչպես համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերման և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորումը հատկացվելու է գերատեսչությունների կողմից մշակված, այդ թվում՝ երկակի նշանակության հիմնախնդիրների լուծման նպատակով: Կատարման ենթակա հիմնախնդիրների ցանկն ընտրվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից, հաստատվելու է ՀՀ կառավարության կողմից, իսկ դրանց լուծմանն ուղղված ծրագրերի ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը հատկացվելու է որպես դրամաշնորհ՝ գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա, մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացման և գիտահետազոտական լաբորատորիաների

աջակցության, միջազգային ճանաչում ունեցող գիտնականների նախաձեռնությունների խրախուսման նպատակով: Մասնավորապես, շարունակվում են Արցախի Հանրապետության հետ համագործակցային ծրագիրը, Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիրը, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաների, երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության, ինչպես նաև ասպիրանտների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության ծրագրերը, պետական գիտական ծրագրերում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման և «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվելիք ծրագրերը:

5. Ոչ բյուջետային աղբյուրներից ստացվող եկամուտները

6.Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրերը/միջոցառումները

7. Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների 1162 ծրագրի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2020- 2022թթ. համար

Ծրագրային դասիչ		Ծրագիր/Միջոցառման անվանումը	Գոյուցուն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը ³⁴ (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը ³⁵ (հազ. դրամ) (-)			Նոր նախաձեռնություններ (հազ.դրամ) (+)			Միջոցառման գծով ամփոփ ծախսեր (հազ. դրամ)		
Ծրագիր	Միջոցառում		2020թ.	2021թ.	2022թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1162		Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	17852118.8	18187064.7	18189611.2	—	—	—	—	—	—	17852118.8	18187064.7	18189611.2
	11001	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	196251.9	199578.0	202124.5	—	—	—	—	—	—	196251.9	199578.0	202124.5
	11002	Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն	10731030.0	10739430.0	10731030.0	—	—	—	—	—	—	10731030.0	10739430.0	10731030.0

11004	Հին ձեռագրերի ինստիտուտի, ցեղասպանության թանգարանի, Բյուրականի աստղադիտարանի, Հայկենսատեխնոլոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանում	1338354.6	1338354.6	1338354.6	—	—	—	—	—	—	1338354.6	1338354.6	1338354.6
11005	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	2400923.3	2724143.1	2732543.1	—	—	—	—	—	—	2400923.3	2724143.1	2732543.1
11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային- ծրագրային հետազոտություններ	144000.0	144000.0	144000.0	—	—	—	—	—	—	144000.0	144000.0	144000.0
11007	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	89145.0	89145.0	89145.0	—	—	—	—	—	—	89145.0	89145.0	89145.0
11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	1058349.5	1058349.5	1058349.5	—	—	—	—	—	—	1058349.5	1058349.5	1058349.5
11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	413116.6	413116.6	413116.6	—	—	—	—	—	—	413116.6	413116.6	413116.6
11010	Ազգային անտենային էտալոնների պահպանություն	64800.0	64800.0	64800.0	—	—	—	—	—	—	64800.0	64800.0	64800.0

11012	Գիտական գրադարանային ծառայություններ	147107.5	147107.5	147107.5	—	—	—	—	—	—	147107.5	147107.5	147107.5
11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ	160370.4	160370.4	160370.4	—	—	—	—	—	—	160370.4	160370.4	160370.4
12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	842000.0	842000.0	842000.0	—	—	—	—	—	—	842000.0	842000.0	842000.0
12002	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ	182400.0	182400.0	182400.0	—	—	—	—	—	—	182400.0	182400.0	182400.0
12003	Հայագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում	3600.0	3600.0	3600.0	—	—	—	—	—	—	3600.0	3600.0	3600.0
12004	Արտասահմանյան համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում	20670.0	20670.0	20670.0	—	—	—	—	—	—	20670.0	20670.0	20670.0
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)													
31001	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	0.0	0.0	0.0	—	—	—	—	—	—	0.0	0.0	0.0

	32001	Ներդրումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներում	60000.0	60000.0	60000.0	—	—	—	—	—	—	60000.0	60000.0	60000.0
1111		Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	175980.0	179985.4	181731.4	—	—	—	—	—	—	175980.0	179985.4	181731.4
	12003	Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ	87372.0	89937.4	90963.4	—	—	—	—	—	—	87372.0	89937.4	90963.4
	12006	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	88608.0	90048.0	90768.0	—	—	—	—	—	—	88608.0	90048.0	90768.0

Աղյուսակ 2. Գիտության ոլորտի գծով 2020-2022 թթ. ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Գիտության ոլորտի գծով ՄԺԾԾ-ով հաստատված և 2022 թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	14275970.0	14275970.0	14275970.0
2. «ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով գիտության ոլորտի համար սահմանված ընդհանուր հատկացումները	13734974.0	X	X	X
3. Գիտության ոլորտի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառմամբ)	X	17234974.0	17566593.8	17566593.8
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3-տող 2)	X	17234974.0	17566593.8	17566593.8
5. Տարբերությունը 2019-2020թթ. ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	2959004.0	3290623.8	3290623.8

Հայտի հետ կապված ռիսկերը

N	Ռիսկի նկարագրությունը	Երևոյթի հանդես գալու հավանականությունը ²	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները
1.	Կազմակերպությունների գիտական ծրագրերի ամբողջական իրականացումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը կամ նոր հանգամանքների ի հայտ գալը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում կամ ծրագրերով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի մոնիթորինգ և դրա հիման վրա վերջնական արդյունքների ճշգրտում
2.	Նպատակային-ծրագրային հետազոտությունների ամբողջական իրականացումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը կամ այլ հանգամանքների ի հայտ գալը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում կամ ծրագրերով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Ծրագրերի մոնիթորինգ, ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չերաշխավորված ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր ծրագրերի ֆինանսավորում
3.	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ամբողջական կատարումը և հայտով նախատեսված արդյունքների ձեռքբերումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում	Ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չերաշխավորված թեմաների իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր մրցույթի կազմակերպում
4.	Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաներով նախատեսված արդյունքների ստացումը	2	Թեմայով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Ընթացիկ հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չերաշխավորված թեմաների իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր մրցույթի կազմակերպում
5.	Գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների հատկացումների անհամապատասխանությունը պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների թվաքանակին	5	Գիտական պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների գիտաշխատողների թվաքանակի փոփոխություն	Գիտական պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների մասին տեղեկատվության հավաքագրում՝ եռամսյակային պարբերականությամբ և համապատասխան բյուջետային հատկացումների փոփոխություն՝ ամենամյա պարբերականությամբ

² Ներկայացված է 1-5 թվանշաններով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն:

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են. Հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության ժամանակակից ենթակառուցվածքի ձևավորումը, տնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսումը, հանրապետության առջև ծառայած անվտանգային և սոցիալական խնդիրների լուծմանը նպաստելը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, հայագիտության զարգացումը, ինչպես նաև գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը:

Այդ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2020-2022 թվականների ընթացքում իրականացվելու են միջոցառումներ, որոնք ամրագրված են, մասնավորապես, ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարությամբ (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ), 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրով (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ) և ՀՀ կառավարության ծրագրով: ՀՀ գիտության ոլորտի 2019-2023 թվականների պետական քաղաքականության ուղենիշներն ամրագրվել են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնում:

ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ, Եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ունեցող, գիտական գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության պահանջներից բխող, պաշտպանունականության մակարդակի բարձրացմանը նպաստող և բարձր տեխնոլոգիական արտադրանք ապահովող ազգային գիտական համակարգ ձևավորելու նպատակով՝ 2020-2022 թվականներին շարունակվելու են՝

- ՀՀ-ում ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության և Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնի ֆինանսավորումը,

- համաֆինանսավորման սկզբունքով իրականացվելու են հայ-ֆրանսիական, հայ-բելառուսական, հայ-ռուսական և հայ-գերմանական, հայ-բուլղարական, հայ-իտալական համատեղ ծրագրեր: Միաժամանակ, ֆինանսավորվելու են նաև մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցությունների մասնակցությունը՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգ (ԲԷՍՀ–H.E.S.S.), ԵՄ հետազոտությունների, գիտության և նորարարության «Հորիզոն-2020» ծրագրի անդամակցությունը՝ 2020 թվականին և «Հորիզոն Եվրոպա» ծրագրի անդամակցությունը՝ 2021-2022 թվականներին և այլն:

Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման նպատակով 2020 -2022 թվականներին շարունակվելու են՝

- Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա ծրագիրը:

- Ասպիրանտների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

- Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության մակարդակի բարձրացման նպատակով 2020 -2022 թվականներին շարունակվելու են կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրեր՝ արտաբյուջետային միջոցների պարտադիր ներգրավման պայմանով՝ համաֆինանսավորման սկզբունքով՝ պահպանելով արտաբյուջետային միջոցների մասնաբաժնի առնվազն 35%-ի մակարդակը:

2020-2022 թվականներին շարունակվելու են գիտության ոլորտի ենթակառուցվածքների ու նյութատեխնիկական բազայի արդիականացման ամենամյա ծրագրերը: Պահպանվելու է նաև պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների անհատական խրախուսման ծրագրերը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2020-2022 թվականների զարգացման հիմնական թիրախները շարադրված են ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ

հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի «Գիտության ոլորտին» վերաբերող կետերում:
Այդ թիրախներն են՝

- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը,
- գիտության ոլորտում արդյունավետության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ ներդրումը,

- երկրի տնտեսության կարիքներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղությունների զարգացումը,

- գիտության ոլորտում երիտասարդա կադրերի ամրապնդման մեխանիզմների ներդրումը, Հայաստանում իրականացվող ծրագրերում արտասահմանում գտնվող հայ գիտանականների ներգրավումը, վերինտեգրման ծրագրերի իրականացումը,

- բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիական ոլորտներում գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոնների ստեղծումը,

- կրթություն-գիտություն կապի սրտացումը՝ ձևավորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցեր՝ ըստ գիտական գործունեության բնագավառների և ապահովելով ուսանողների, պրոֆեսորդասախոսական կազմի և գիտաշխատողների տեղաշարժը ցանցի մաս կազմող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում.

- հայերեն լեզվի գործառության ու զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծումը,

- միջազգայնորեն մրցունակ, միջազգային գիտական նվաճումների միտված, երկրի տնտեսության մրցունակությանը և անվտանգությանն անմիջականորեն նպաստող գիտական համակարգի ստեղծումը:

Վերոնշյալ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2020-2022 թվականներին իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում,

- գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և ներդրում,

- գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրի մշակում և ներդրում,

- գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունների սահմանում և դրանց շրջանակներում ծրագրերի առաջնահերթ իրականացման մեխանիզմների ներդրում,

- տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,

- երկակի նշանակության ծրագրերի իրականացում,

- գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի մշակում և ներդրում,

- օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերահնտեգրման ծրագրերի իրականացում,

- միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,

- գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ ներդրում,

- Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում,

- հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ոլորտի 2020-2022 թվականների ծախսային գերակայություններն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

- *Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում՝*

Անհրաժեշտ գնահատել գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետությունը և ներդնել կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմներ: Այս գործընթացին պետք է հաջորդի գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացումը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ

գերատեսչական պատկանելությունից, միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորումը: Պետք է հստակեցնել գիտական կազմակերպությունների տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները (արժևորելով տնօրենի պաշտոնը և վարչական ազդեցությունից հանելով գիտական որոշումների ընդունման գործառույթները), սահմանափակել գիտական ստորաբաժանումների ղեկավարների և տնօրենի պաշտոններն անընդմեջ զբաղեցնելու ժամանակահատվածը, հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպահրավական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և խրախուսելով բուհերի մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը (համաֆինանսավորման սկզբունքով ծրագրերի իրականացում, համատեղ լաբորատորիաների ստեղծում և այլն):

Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության իրական մրցութային պայմանների ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես ծրագրային սկզբունքով և հասցեագրված:

Գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը պետք է պարունակեն գիտահետազոտական բաղադրիչ, ինչը հնարավորություն է տալիս տվյալ գիտական կազմակերպության ենթակառուցվածքի արդիականացումն ու հետագա զարգացումը պայմանավորել բացառապես իրականացվող հետազոտությունների անհրաժեշտությամբ:

Անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման և երկակի նշանակության գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խրախուսման մեխանիզմներ՝ այդ ուղղություններում իրականացվող հետազոտությունների քանակի ավելացման և որակի բարձրացման նպատակով:

Պետք է շարունակել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցութային ծրագրերը՝ արտաբյուջետային միջոցների ներգրավումով, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս մրցույթի շահառուների շարքում ընդգրկել նաև ոչ պետական գիտական կազմակերպությունները:

Երկակի հետազոտությունների ծրագրերի ծավալը պետք է մեծացնել՝ գիտահետազոտական լաբորատորիաներին տարեկան տրամադրելով պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների ֆինանսավորման տարեկան առավելագույն ծավալների կրկնապատիկ աջակցություն:

- *Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում՝*

«Ձ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը: Անհրաժեշտ է մշակել և ներդնել գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման և օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրեր:

Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել իրականացնել, մասնավորապես.

- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա և ասպիրատների անհատական խրախուսման միամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում,

- պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ մրցութային կարգով ընտրված մինչև 100 գիտաշխատողի տրամադրելով ամսական 166.68 հազ. դրամ հավելավճար:

- պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ մրցութային կարգով ընտրված մինչև 20 երիտասարդ գիտաշխատողի տրամադրելով ամսական 90.0 հազ. դրամ հավելավճար:

Գիտության ենթակառուցվածքների արդիականացման նպատակով անհրաժեշտ է շարունակել՝ գիտական սարքերի և սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման ամենամյա դրամաշնորհային ծրագրերը:

- *Գիտական, գիտակրթական և գիտափոխնությունների գերազանցության կենտրոնների ստեղծումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը՝*

Անհրաժեշտ է մշակել և ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման, գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր:

Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղությամբ անհրաժեշտ է պետական աջակցություն տրամադրել գիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը, ինչպես նաև Հանրապետության համար հեռանկարային համարվող ուղղություններն օտարերկրյա պետությունների, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքի նմանօրինակ ուղղությունների հետ ինտեգրմանը: Մասնավորապես, միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝

- համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,
- անդամակցությունը գիտական կառույցներին (Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍԿ - H.E.S.S.) աշխատանքներին:

2020 թվականին պետք է շարունակել ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրի անդամակցությունը, իսկ 2021-2022 թվականներին ԵՄ հաջորդ շրջանակային ծրագրի՝ «Հորիզոն Եվրոպայի» անդամակցությունը, ինչի արդյունքում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները և գիտական կազմակերպությունները հնարավորություն կունենան ստանալու առաջավոր հետազոտական և զարգացմանն ուղղված նախագծերի իրականացման հնարավորություն և ֆինանսավորում:

- *Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում՝*

Հայագիտության ոլորտի առաջնային զարգացմանն ուղղությամբ անհրաժեշտ է՝

- հայագիտության ոլորտի առաջընթաց զարգացումն ապահովող ծրագրերի իրականացում՝ որպես հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման և ՀՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություն,
- հայագիտության բնագավառի կադրերի պատրաստմանն ու վերապատրաստման մեջ օտարերկրյա պետությունների, առաջին հերթին Սփյուռքի հայագետների ներգրավում,

հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացում, այդ թվում՝ աշխարհի հայագիտական հաստատությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Վերը շարադրված թիրախների ապահովման նպատակով 2019 թվականի պետական բյուջեով «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացման համար հատկացվելու է 13,734,974.0 հազ. դրամ, 2020 թվականին նախատեսվում է հատկացնել 17,234,974.0 իսկ 2021-2022 թվականներին՝ 17,566,593.8 հազ. դրամ:

2020-2022 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումները: Գիտության ոլորտի 2019-2022 թվականներին իրականացվող ընդհանուր ծախսերը՝ ըստ ծախսային ուղղությունների բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի 2019-2022 թվականների ծախսային ծրագրերի և պարտավորությունների գծով ամփոփ կանխատեսումը:

(հազար դրամներով)

	2019թ.	փոփոխությունը %ով	2020թ.	փոփոխությունը %ով	2021թ.	փոփոխությունը %ով	2022թ.
Գիտություն (առանց կապիտալ ծախսերի), ընդամենը	13734974.0	25.43	17234974.0	1.92	17566593.8	0.0	17566593.8
այդ թվում՝							
1. Բազային	11995658.2	22.46	14690050.7	0.06	14698450.7	-0.06	14690050.7
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	87.34		85.23		83.67		83.62
այդ թվում՝							
գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	842000.0	0.00	842000.0	0.00	842000.0	0.00	842000.0
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	6.13		4.89		4.79		4.79
2. Նպատակային-ծրագրային	144000.0	0.00	144000.0	0.00	144000.0	0.00	144000.0
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	1.05		0.84		0.82		0.82
3. Պայմանագրային (թեմատիկ)	1595315.8	50.50	2400923.3	13.46	2724143.1	0.31	2732543.1
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	11.61		13.93		15.51		15.56